Եթե Դուք արդեն օգտվում եք Անսահմանափակ մուտք շարժական ինտերնետ տարբերակից, ապա կշարունակեք օգտվել այդ տարբերակից քանի դեռ չեք ապաակտիվացրել այն, կամ անցում կատարել այլ սակագնային պլանի, որին այն հասանելի չէ:

**Անսահմանափակ մուտք շարժական ինտերնետ ՝ 1 օր 100 դրամով**

Ծառայությունն ամեն անգամ ավտոմատ կվերաակտիվացվի 24 ժամն ավարտվելուց հետո, և Ձեր հաշվից կգանձվի 100 դրամ:

Անսահմանափակ մուտք շարժական ինտերնետ տարբերակի դեպքում ներբեռնման և վերբեռնման արագությունը մինչև 512 կբ/վ է:

**Անսահմանափակ մուտք շարժական ինտերնետ ՝ 7 օր 500 դրամով**

Ծառայությունն ամեն անգամ ավտոմատ կվերաակտիվացվի 7 օրն ավարտվելուց հետո, և Ձեր հաշվից կգանձվի 500 դրամ:

Անսահմանափակ մուտք շարժական ինտերնետ տարբերակի դեպքում ներբեռնման և վերբեռնման արագությունը մինչև 512 կբ/վ է:

Տարբերակի վերաակտիվացումը կսկսվի ակտիվ տարբերակի ժամկետի ավարտից 10 րոպե առաջ: Նախքան տարբերակի վերաակտիվացման սկիզբը, Ձեր հաշվին պետք է լինի բավարար գումար տարբերակի վերաակտիվացման համար: Այդ ընթացքում Դուք չեք կարող փոխել կամ ապաակտիվացնել Ձեր ընթացիկ անսահմանափակ տարբերակը: Լրացուցիչ ծառայությունները/փաթեթները ակտիվանում են ակտիվացումը հաստատող SMS հաղորդագրությունը/ծանուցումը ստանալուց հետո:

Հաշվեկշռին բավարար գումար չլինելու, ինչպես նաև հեռախոսահամարի պասիվ շրջան անցնելու դեպքում ծառայությունը պարզապես կդադարի գործել և ավտոմատ կվերակտիվացվի հաշիվը լիցքավորելու դեպքում՝ պայմանով, որ վերաակտիվացումից հետո Ձեր հաշվին մնա առնվազն 50 դրամ: Հակառակ դեպքում ավտոմատ վերաակտիվացում չի կատարվի:

Այս տարբերակի ավտոմատ վերաակտիվացումը կարող եք ցանկացած պահի դադարեցնել՝ հավաքելով *129*30#OK: Տարբերակի վերաակտիվացումը դադարեցնելուց հետո, Դուք այլևս հնարավորություն չեք ունենա կրկին ակտիվացնել այն, քանի որ այս տարբերակը դադարել է գործել: